

ՄԱՐՄՆԱՄԱՍԵՐ ՆՇԱՆԱԿՈՂ ԲԱՌԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱՏ  
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն. 4. ԳԻՆԱՐՑԱՆ

Տեղանվանագիտությունը մի յուրահատուկ գիտական բնագավառ է, որն ուղղակիորեն առնչվում է ու կարծես պատկանում մի քանի գիտակարգերի, այն ըստ էության խաչմերուկն է, հատման կենտրոնը այնպիսի հիմնարար գիտությունների, ինչպիսիք են լեզվաբանությունը, պատմությունը, աշխարհագրությունը, հոգեբանությունը և ազգագրությունը: Բառ-տեղանունը բյուրեղացումն է անվանադիր ժողովրդի ողջ պատկերացումների՝ շրջակա աշխարհի և այդ աշխարհում իր գրաված տեղի ու դիրքի մասին: Տեղանվան ծագումնաբանության, կառուցվածքային կաղապարների, գործառության ուսումնասիրությունը հարուստ նյութ է ընձեռում տվյալ հանրության պատմության, լեզվամտածողության կերպի, աշխարհընկալման և երևակայության վերաբերյալ: Հայ ժողովուրդը, ճակատագրի կամոք կազմավորվելով Հայկական բարձրավանդակի ընդարձակ տարածքում, չափազանց հարուստ է տեղանուններով, ընդ որում դրանց նշանակալի մասը գալիս է դեռևս վաղնշահայերենից, այսինքն՝ արտացոլում է այն ժամանակները, երբ մարդն աշխարհը ընկալում էր զուտ մարդակերպ՝ «ըստ պատկերի յուրում»: դաշտերն ու լեռները, բերդերն ու շեները, գետերն ու լճերը նմանեցվում էին աչքերի ու շուրթերի, ձեռքերի ու ոտքերի, այստեղից էլ մարդու և կենդանիի մարմնամասեր նշանակող բառերի լայն կիրառությունը իբրև տեղանուններ, մի գործընթաց, որը հետագայում աստիճանաբար մարում է, որովհետև արդյունքն էր մարդկային առարկայական մտածողության նախնական աստիճանի: Տեղանունների քննության առաջին քայլը դրանց դասակարգումն է, առավել ամբողջական լինելու համար դասակարգումը պետք է կատարվի մի քանի մակարդակով: Զուտ լեզվական տեսանկյունից, ըստ կազմության եղանակի (արտահայտության պլան), տեղանունները բաժանվում են երկու մեծ խմբի. Ա) միաբաղադրիչ՝ Ամասիա, Արաբկիր, Բերան, Դիվակու... Բ) բազմաբաղադրիչ՝ Անարծաթ բժշկաց վանք, Բազեի քիթ, Այծու պտկունք, Դից մայրի... Միաբաղադրիչ տեղանուններն իրենց հերթին բաժանվում են. ա) պարզ կամ արմատական՝ Մակատ, Բազուկ, Գանձ, Արեգ... բ) ածանցավոր, այստեղ կարող են գտնվել զուտ տեղանվանակերտ ածանցներով կազմությունները՝ վան- Դատվան, Ահրեվան, Այրիվան, Այգեվան, Արջեվան..., պատ- Աստապատ, Վաղարշապատ, Սարդարապատ, Բյուրապատ..., ստան- Արևաստան, Այգեստան, Հայաստան..., ընդհանրական ածանցներով կազմություններից՝ Արևիք, Անձառ, Գալուստ, Դյութական, Թաթիկ..., գ) բարդ՝ Արյունքար, Բացքերան, Կանջահիստ..., դ) բարդաածանցավոր՝ Քաջքերունք, Նորաշենիկ, Անտառաղոցարան...

Բազմաբաղադրիչ տեղանունները բաժանվում են. ա) անվանական կապակցությունների՝ Ազոավի տապան, Ակրբու հարս-փեսա, Մալյաց ոտն..., բ) բայական (ստորոգումային) կապակցությունների՝ նախադասությունների (երբեմն անգամ բարդ)՝ Գոհանամ և ասեմ, Տես և անց... Բառակազմական մակարդակից անցնելով ձևաբանականին՝ Ա և Բ խմբերի տեղանունները, ըստ հիմնային բաղադրիչի խոսքիմասային պատկանելության, դասակարգվում են. 1) գոյական՝ հատուկ-հասարակ, վերացական-թանձրացական. Գալակ, Դավիթ-Բեկ, Դավիթ-Մհերի բերդ, Խոռ... 2) ածական՝ որակական-հարաբերական. Տերունական, Սպիտակ, Կարմիր, Դժնադեմ, Խոժոռ, Բերրի... 3) թվական՝ Երկտասանք, Յոթըն, Քառասնից... 4) բայ՝ դիմավոր-անդեմ. Գոհանամ, Երկյալ, Բարձյալ... 5) այլք՝ Ախվախ, Դիմաց, Տակին... Այս մակարդակում առյուծի բաժինը կազմում են գոյականա տիպերը, ապա՝ ածական, մնացյալների տոկոսը չնչին է: Զևաբանական մակարդակում դասակարգման հիմք կարող է դառնալ նաև տեղանուն դարձած միավորների ուղիղ կամ թեքված լինելը՝ հողովում, խոնարհում, թիվ: Ամենագործունն իհարկե բառերի ուղիղ ձևից կազմված տեղանուններն են, սակայն հատկապես հին շրջանի տեղանուններում տեսակարար մեծ կշիռ ունեն բառերի եզակի կամ հոգնակի սեռակնից կազմված ձևերը, որոնք արտահայտում էին պատկանելություն կամ սերում՝ Հարանց, Մարց, Իշխանաց, Անկշտանց,

Արբանաժու, Գայլու..., բավականին շատ են նաև հոգնակի բառաձևերը՝ Ագարակք, Այրք, Արքք, Աչք, Ակունք, Ձորք, Ծաղկունք, Հարությունա գուներ... Հատկանշական է, որ նման կառույցները գրաբարյան են կամ բարբառային և արդի հայերենում հաճախ չեն էլ ըմբռնվում իբրև թեքված ձևեր, դրանք քարացած կաղապարներ են, որոնք այժմ վերածվել են բառերի ելակետային ձևերի. բառահարաբերական ձևություները դարձել են բառակազմական: Դասակարգումը կարող է ահմանազատել գրական լեզվով արտահայտված տեղանունները և բարբառային տարբերակները՝ համապատասխան հնչյունական, քերականական ձևավորմամբ՝ Անգջիք, Ականջացավի աղբյուր, Ասլան բողազ, Եղջյուր խոյի, Կոնատիկ, Սատանի պոզ... Նշենք, որ բարբառային տեղանունները հատկապես շատ են միկրոտեղանունների մեջ. խոշոր օբյեկտները սովորաբար ամրակայվում են գրական բառաձևերով:

Յուրաքանչյուր գիտական դասակարգում պետք է ելնի մեկ ընդհանրական սկզբունքից (principium divisionis), և հիմնական բաժանման արդյունքում գոյացած խմբերը իրենց հերթին պետք է տրոհվեն՝ գոյացնելով խորքային համակարգը: Տեղանունների վերը քերված դասակարգումների հիմքում միայն լեզվի քերականական կառուցվածքն է: Սակայն այս սկզբունքը պետք է անկայմանորեն լրացվի իմաստաբանական և պատմաժամանակագրական մեկնակետերով: Պետք է առանձնացվեն բառային այն դաշտերը, որոնք մասնակցում են տեղանունների ստեղծմանը, այնուհետև պետք է ճշտվի, թե որ ժամանակաշրջանում որ իմաստային և ձևային կաղապարներն են գերակշռել: Տեղանունների արտահայտության պլանի վերլուծությունը պետք է լրացվի բովանդակության պլանի քննությամբ: Առդպիսով դասակարգումը կդառնա հնարավորին չափ ընդգրկուն և լիարժեք: Համաձայն հայտնի լեզվի շրջանաբաժանման՝ հայերենի տեղանունները ժամանակագրորեն կբաշխվեն հետևյալ կերպ. Ա) նախահայերենից եկող տեղանուններ, Բ) վաղնջական և հնագույն հայերենից եկող տեղանուններ, որոնք ըստ էության բուն հայկական տեղանուններն են և առավել հեշտ են: Ենթակա ստուգաբանական և կառուցվածքային վերլուծության, Գ) գրաբարյան տեղանուններ, Դ) բարբառային տեղանուններ, Ե) աշխարհաբարյան տեղանուններ: Այս բաժանո մե իհարկե ունի իր ենթաճյուղերը:

Տեղանվանագիտության մեջ ընդունված ընդհանրական տիպաբանական դասակարգումը տեղանունները բաշխվում են չորս խմբերի. 1) տոհմացեղային միություն կամ սեբուն ցույց տվող բառերից ծագած տեղանուններ, 2) որակակիչ կամ նկարագրական տեղանուններ, 3) պատմաանհետևանքային տեղանուններ, որոնք արտահայտում են տեղեկություններ անվանող օբյեկտի դիրքի մասին տարածության և ժամանակի մեջ, 4) դիպվածային տեղանուններ, որոնց մեջ մտնում են ոչ օրինաչափ, պատահական կազմությունները:

Մարդու և կենդանիների մարմնամասեր նշանակող բառերից կազմված տեղանուններն ըստ ժամանակագրական դասակարգման առավել գործուն են եղել Բ, Գ, մասամբ և Դ շրջաններում, այսինքն՝ ժամանակակից փոլում տեղանվանաստեղծման այս կաղապարը արդյունավետ չէ՝ բացառյալ նախնականորեն մարմնամաս նշանակող, սակայն հետագայում ըստ գոգորդման բառիմաստի ընդայնմամբ նաև ունիեֆի տարրեր անվանող բառերից կազմված կառույցները: Նման բառերի իմաստի ընդլայնումը կատարվել է տարբեր ժամանակներում և տարբեր արագություններով, ուստի բառարաններում այդ բառերն ամրագրված են և իբրև մարմնամասեր անվանող, և իբրև աշխարհագրական եզրեր՝ մի մասը **փոխաբերական** նշումով, մյուսներն անգամ առանց դրա: Օրինակ՝ Ակ, ակն, աչք— 1. տեսողության օրգան, 2. ջրի ակունք, աղբյուր, ափ— 1. ձեռքի հետևի կողմը, 2. ջրային մակերևույթի ցամաքային սահմանը, բազուկ— 1. ձեռքի՝ ուսից մինչև արմուկը հասնող մաս, 2. գետի կամ լեռնաշղթայի ճյուղավորում, բերան— 1. երկու շրթունքների բացվածք, 2. անցք, մոտք, 3. ջրի ակունք, գետաբերան, թև— 1. թռչունների, միջատների թռչելու գործարան, 2. մարդու բազուկ, ձեռք, 3. առարկայի տարածության մեջ հորիզոնականորեն դեպի աջ կամ ձախ տարածվող մաս, 4. եզերք, ափ, լանջ— 1. կուրծք, 2. լեռան զառիվեր մասը, կող— 1. մարդու մարմնի աջ կամ ձախ մասերը՝ թիկունքից մինչև ազդրերը, 2. լեռան երկու կողմերի միջև ընկած շերտը, 3. եզր, ծայր, ճակատ— 1. մարդու կամ կենդանու գլխի՝ աչքերից վեր գտնվող մասը, 2. որևէ բանի լայնական մակերեսը, մատ, մատ— 1. ձեռքի՝ ոտքի թաթի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը, 2. կողոպկ, 3. լեռան ճյուղավորություն, լեռնաճյուղ, բուռ— 1. մարմնի ծայրանդամ, 2. ստորոտ...<sup>2</sup>

Վերն արդեն նշվեց, որ մարմնամասերից բաղկացած տեղանունները մարդու առարկայական մտածողության նախնական աստիճանի ներստացումն են. մարդն ամենից առաջ ճանաչում է իրեն, իր մարմինը, ապա փորձելով ճանաչել շրջապատը՝ ուղակիորեն հա-

<sup>1</sup> Տե՛ս A. B. Суперанская, Общая теория имени собственного, Москва, 1973, 149—160:  
<sup>2</sup> Հմտ. էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հատոր Ա, Բ, Երևան, 1976:

մեմատում է այն մարմնի հետ, գտնելով ընդհանուր եզրեր՝ անմիջապես ամրակայում է բառապաշարում արդեն ծանոթ անունով: Այսպիսով՝ մարմնամասերից կազմված տեղանունները արդյունք են զուգարման և համաբանության: Ըստ տիպաբանական դասակարգման դրանք պատկանում են որսկանիչ, նկարագրական խմբին: Այժմ հերթականությամբ քննենք մարմնամասերից կազմված առավել գործուն տեղանունական կաղապարները: Ամենաարդյունավետը և հաճախ հանդիպողը **ակն** կամ **աչք** բառից կազմված ձևերն են, որոնք առաջին հերթին ջրանուններ են՝ հետագայում արդեն մերձուկա բնակավայրերի վրա տարածված: Օրինակ՝ Ակն, Ականց, Ակնաջուր, Ակնալիճ, Ակնածով, Ակնաշեն, Ակնախաչ, Ակնատաշտ, Աչաջուր, Աչքասար, Աչքահան, Բազմակն, Բազմական, Բյուրակնանի... Այս շարքի որոշ տեղանուններում մարմնամասի գաղափարը շեղաված է, ինչպես՝ Աչքասար, Աչաջուր, Աչքահան, սակայն մեծ մասի մեջ այն զուտ ստորգաղափարական է, մթազանծ և նախնականորեն չվերականգնվող: Դա հատկապես վերաբերում է **ակն** բառից կազմված և ուղիղ, և թեք ձևերին, որովհետև արդի նշանակումն **ակ. ակն** բառերը գրեթե չեն գիտակցվում իբրև **աչք** բառի հոմանիշներ, այլ նշանակում են հենց ակունք, աղբյուր:

Երկրորդ առավել գործուն կաղապարը կազմված է **փոր** բառից: Հատկանշական է, որ այսպես են կոչվում գերակշիռ մեծամասնությամբ գավառների անունները, սլախնք՝ տեղանունն իր թովանդակությամբ արտահայտում էր որոշակի ծավալ՝ ամբողջի և մասերի հարաբերություններ: Այս տեղանունների սկզբնաձևերը բաղադրյալ են, շարահյուսական բնորոշմամբ հատկացուցիչ-հատկացյալ, ավելի հազվադեպ որոշիչ-որոշյալ կապակցություններ, սակայն խոսքային հաղորդակցման անմիջական պահանջով դրանք աստիճանաբար վերածվել են կցական կամ իսկական բարդությունների՝ հողակապով կամ անհողակապ: Այսպես՝ Ազորդաց փոր, Բերդաց փոր—Բերդափոր, Ասրյաց փոր, Գոմիփոր, Գունբեթփոր, Կողբփոր, Բոլնոփոր, Դաստափոր, Պարտիզափոր, Ծակփոր, Միսփոր և այլն:

**Ուռքի** և նրա մասերի անվանումները հին շրջանում ծնունդ են տվել մի շարք գեղեցիկ տեղանունների և թուն բառիմաստով՝ Աոնիտուն. ստուգաբանում է որպես **Առ Նոյ ուռն**, այստեղից էլ տեղանվան տարբերակները՝ Ուռն Աոնո, Ուռն Աոնո, և ուռք բառի ածանցյալ իմաստներով՝ իբրև ծայր, ստորոտ՝ Արագածոտն (Արագածո ոտն), Մասյաց ոտն, Ծնկագեղ, Թաթ, Թաթիկ...

**Գլուխ** և նույնիմաստ **կատար** բառերից կազմվել են ոչ միայն լեռնագագաթների ու լեռնաշղթաների անուններ, այլև բերդերի ու շեների, վանքերի տեղանուններ, որոնք արդյունք են համեմատության և մարդու երևակայության թույլբերի: Որպես օրինակաչափություն՝ դրանք բաղադրյալ կառույցներ են՝ լրացում-լրացյալ, հետագայում բարդ բառեր դարձած Ակնագլուխ, Աքաղաղի կատար, Բլքի գլուխ, Գլխու բերդ, Գեր գլուխ, Ցլու գլուխ, Սատանի գլուխ...

**Բերան** բառից կազմված տեղանուններն ունեն ընդգրկման մեծ ոլորտ, դրանք անվանում են նահանգներ, գավառներ, լեռնանցքեր, բերդեր ու շեներ՝ Տուրուբերան, Տավրուբերան, Առբերան, Գայլու բերան, Բերան, Բերան Երասխա, Բացբերան, Երախ և այլն:

**Լանջ** բառից ածանցված ձևերն առավել մեծաթիվ են, այս կաղապարը գործուն է նաև տեղանվանաստեղծման ներկա փուլում, պատճառն այն է, որ լանջը որպես մարմնամաս՝ կուրծք, արդի հայերենում գրեթե չի գործածվում, այն վերածվել է ռեփեֆի աշխարհագրական անվանման, ինչպես ակն-ը, ափ-ը, կող-ը, բազուկ-ը..., և արտահայտում է առարկայի տարածական հարաբերություն: Օրինակ՝ Լանջասատ, Լանջանիտ, Լանջառ, Ծաղկալանջ, Մարալանջ և այլն: Այս բառի բարբառային տարբերակը՝ դոշ, ևս հանդիպում է տեղանուններում՝ Բերդի դոշ, Արջադոշ... **Ստինքներ-ը**՝ բարբառային ծիծ տարբերակով, հիմնականում լեռնաշխարհի տեղանուններ են կազմել. որոնցից հետո անցել են մերձակա օբյեկտներին ու բնակավայրերին՝ Ծծաբար, Ծծաբարի ծով, Ծծեր, Ծծերի առու...

**Գեմքը** և նրա մասերը արտահայտում են մարդու կարևորագույն որակական ու տարբերակիչ հատկանիշները, այստեղից էլ նրանցից կազմված բազմաթվույթ տեղանունները: Նման կառույցները հաճախ արտահայտում են հուզական-զգացմունքային երանգ՝ Երկու երես, Դժվարադեմ, Դժնադեմ..., և ծնունդն են ժողովրդի երևակայության, շրջապատող աշխարհի գունեղ ու պատկերային ընկալման: Պատահական չէ, որ այս տեղանունները իրենց զգալի մասով բարբառային կամ ժողովրդախոսակցական տարբերակներ են, ինչպես օրինակ՝ Անկաջալու խաչ, Բազեի քիթ, Ծծմուկան քիթ—Ծծմակաքիթ. Մազի կամուրջ, Հեր, Ծանուկույս, Անգռիք, Կարամորուք, Ծակատք, Ատամն, Ատաման: **Ականջացավի աղբյուր** անունն արդեն կապված է գործնական նպատակադրման և տեղեկատվության հետ, աղբյուրի ջուրը բուծում է նման հիվանդությունները. նույն կառուցվածքի են **Խոցոց վանք**, **Խոցերու գետ** տեղանունները:

**Կող** բառը տեղանուններ է կազմում հիմնականում լեռնաշխարհի և նրան հարակից օբյեկտների համար, խիստ որոշակի կաղապարով և ոչ թե որպես մարմնամասի անվանում, այլ արդեն առարկայի տարածական հարաբերություն նշանակող բառ՝ **Կանաչկող**,

Կապուտկող, Արևկող... Որոշ տեղանուններում այս բառի իմաստը ձեռք է բերում փոխաբերական երանգ. կողը որպես համառություն, իրասածություն՝ Սասանի կող, Եզնակող:

Թե բառից և նրա մասերից են կազմված հետևյալ տեղանունները՝ Դաստակ, Թե, Բագուկ, Բազկաբերդ, Կոնատիկ, Մատուճ... Ջուտ փոխաբերական և զգացմունքային երանգի են սիրտ, արյուն, արտասուք բառերից կազմված տեղանունները, որոնց շուրջ հյուսվել են գեղեցիկ լեգենդներ ու գրույցներ՝ մեծավասասմբ իրական հիմքով: Այսպես՝ Արտասուքի աղբյուր, Արտասվաց լեռ, Արտոս, Արյան լիճ, Արյան բլուր, Արյունաքար, Արունք, Արաբի սիրտ, Դեղ սիրտ... Մանգուկներտ քաղաքի մոտ գտնվող Արտասուքի աղբյուրի անունը կապվում է Հակոբ Մծբնա հայրապետի հետ. անհավատները ծովն են նետել նրա սարկավագներին, և հայրապետի անսիրտ ու սուրբ արտասուքներից գոյացել է այդ ականակիտ աղբյուրը: Արյան լիճն այսպես է կոչվել Վասպուրականի հայերի և արաբների 852 թվականի դաժան ճակատամարտից հետո, քազում նահատակների արյունը, որոնց թվում էր նաև Գուրգեն իշխանը, բոսորագույն է դարձրել լճի ջուրը՝ որպես հաղթանակի անողորմ, բայց անհրաժեշտ զոհաբերում: Արյան գետի անվանումը կապված է սելջուկ սուլթան Տուրքիի մահ ու ավեր սիրող արշավանքների հետ<sup>3</sup>:

Կենդանիների մարմնամասերի անվանումներից կազմված տեղանուններն ունեն նույն կառուցվածքային և ծագումնաբանական օրինաչափությունները, ինչ մարդու մարմնամասեր նշանակողները: Այս տիպի, ինչպես նաև բուսականներից և բույս կենդանանուններից առաջնորդ տեղանունները պարունակում են հարուստ տեղեկություններ հայոց բնաշխարհի մասին և ամենակարևորը՝ մարդու կողմից այդ բնաշխարհի ճանաչման և նրա հետ հաստատված հարաբերությունների բնույթի մասին:

Ընդհանրացնելով վերը ասվածը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

Ա) Մարդու և կենդանիների մարմնամասեր նշանակող բառերից կազմված տեղանունները լեզվի համեմատաբար հին շրջանի վկայություններ են, մարդակերպ աշխարհի հուշարձաններ: Տեղանվանատեղեման այս կաղապարն այժմ՝ հատկապես գրական լեզվում գործում չէ: Տեղանունների հիմքում դրվող մարմնամաս արտահայտող բառերն էլ արդեն կորցրել են իրենց առաջնային բուն իմաստը՝ դառնալով աշխարհագրական եզրեր, ինչպես՝ Սարալանջ, Արևկող, Բյուրակն, Ակնալիճ:

Բ) Ըստ կազմության այս բաղադրիչները մեծավասասմբ երկբաղադրիչ են. բաղադրիչներից առաջինը կամ անձական-որոշիչ է, կամ սեռական հոլովով դրված հատուկ, ավելի հաճախ հասարակ գոյական-հատկացուցիչ, երկրորդ բաղադրիչը՝ լրացյալը, մարմնամաս նշանակող բառն է՝ Մալայաց թիկունք, Բերդաց փոր, Խոփ գուլա... Սակայն այս վերլուծական կազմությունները միտում ունեն վերածվելու միաբաղադրիչ ձևերի՝ Բերդաց փոր—Բերդափոր, Արագածու ոտն—Արագածոտն... Մարմնամաս անվանող բառերը ինքնին, առանց լրացման կամ լրացյալի համեմատաբար սակավ են տեղանուն դառնում՝ Կտուց, Գավակ, Բերան, Ճակատք: Նման ձևերը հաճախ տեղանվան կրճատման կամ ամփոփման արդյունք են. խոսքը, հաղորդակցումը պահանջում է կարճ, դյուրահունչ կառույցներ:

Գ) Ըստ տիպաբանական դասակարգման այս տեղանունները որակակից-նկարագրական են, նրանք բնութագրում, ներկայացնում են առարկան՝ մարդու կամ կենդանիների մարմնամասերի հետ ունեցած ուղղակի, արտաքին նմանության հիման վրա՝ Աքաղաղի կատար, Մազի կամուրջ, Բազեի բիթ: Աստիճանաբար, սակայն, նման տեղանունների առաջացումը կապվում է ոչ միայն պարզ համեմատության հետ, այլև գեղարվեստական երկվակալության, առասպելների, ավանդությունների ու պատմության հետ, ինչպես՝ Աչքահան, Առ Նոյ ոտն, Դեղսիրտ լեռ, Արյան լիճ և այլն:

II. А. ДИЛБАРЯН — Топонимы образованные от слов, обозначающих части тела в армянском языке. — В статье исследуются армянские топонимы, образованные от слов, обозначающих части тела человека и животных, их структура, этимология, распространенность и продуктивность. Топонимы этого типа являются более поздними фактами языка, отголосками тех времен, когда человек воспринимал и познавал мир «по своему образу и подобию». По структуре это топонимы-словосочетания, где название части тела имеет определение, или прилагательное, или существительное в родительном падеже.

При этом название части тела одно, без определения редко становится топонимом, хотя устная речь, коммуникация ведет к тому, что словосочетания—топонимы превращаются в сложные слова. Начальная основа возникновения этих топонимов — это внешнее сравнение и аналогия, позднее такой основой становятся народные легенды, сказания, исторические факты. Многие названия частей тела постепенно прекращаются и географические термины, теряя свое первоначальное содержание.

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատուկ 1-ին և 2-րդ, Երևան, 1986, 1988 թթ.: